

ՀԵՌԱԿԱՅ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ «ԳԱԼՈՒՄՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏՆՕՐԷՆ ՌԱԶՄԻԿ ՓԱՆՈՍԵԱՆԻ ՀԵՏ

«ՄՓԻՒՌԸ ՊԷՏՔ Է ՍՏԱՆՁՆԷ ԻՐ ՀԱՐՑԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ»

«Նոր Յառաջ» - Մեկուսացումի շրջանին Կիլպեցկեան հիմնարկութիւնը երեք Գործարարներով ասպարեզ իջաւ: Արդէն այսպիսի ծրագրեր Գալուստեան Էրեք եւ մեկուսացումը ճիշդ ատենին՝ Եկաւ, այսինքն՝ զուգահեռութիւնն է, թէ՛ մասնաւոր մտածուած ծրագիր է, որ պակասաձեւ ժառանգի յայտնուելէն ետք պատրաստեցիք:

Ռազմիկ Փանոսեան - Հայկական բաժանմունքը ժառանգելու պատճառով չորս նոր ծրագրեր պատրաստեց: Երկուքը մրցանակներ են.

- «Խօսք առ»-ը առիթ կու տայ մա՛նաւանդ երիտասարդներուն՝ հայերէնով արտայայտուելու եւ անդրադառնալու մարդկութիւնն ու աշխարհը յուզող հիմնահարցերուն:

- Երկրորդը՝ ուսուցիչներու քաջալերական մրցանակն է: Այս երկուքը պակասաձեւ ժառանգի շրջաժիրին մէջ կեանքի կոչուեցան:

Ասկէ զատ, կրկին ժառանգի պատճառով, Հայաստանին օժանդակելու հարցը հրամայական դարձաւ, յատկապէս սկզբնական շրջանին, երբ ժառանգի պաշտպանուող սարքերու, դիմակներու եւ բժշկական գործիքներու կարիքը զգալի էր: Առ այդ անմիջապէս օգնութեան հասանք, գործակցելով Սփիւռքի յանձնակատարի գրասենեակին հետ:

Իսկ երկու շաբաթ առաջ մարդասիրական օժանդակութիւն յատկացուցինք լիբանանահայ գաղութին:

Ուրիշ ծրագիր մը նոյնպէս կը վերաբերի Լիբանանի. նորարար մշակոյթ ստեղծելու նախաձեռնութիւն մըն է, որ արդէն ամիսներէ ի վեր նախատեսած էինք: Այնպէս մը զուգահեռակցաւ, որ Փետրուար ամսուն այդ մասին յայտարարեցինք: Ան Լիբանանի մեր 2019-ին պատրաստած ռազմավարութեան սիւներէն մէկը կը հանդիսանայ:

Հետեւաբար այս ամիսներուն մեկնարկած հինգ ծրագրերէն չորսը համաճարակի պայմաններուն մէջ նախաձեռնուեցան:

Պէտք է ակնարկեմ, թէ այս աննախընթաց կացութեան մէջ ստիպուած եղանք ջնջելու, յետաձգելու կամ ձեւափոխելու նախատեսուած կարգ մը այլ ձեռնարկներ: Օրինակի համար Լոնտոնի Գիրքի միջազգային տօնավաճառին առթիւ նախատեսուած դասախօսութիւններու շարքը չկրցանք իրագործել: Կամ՝ Գալուստ Կիլպեցկեանի ծննդեան 150-ամեակին առիթով Հայաստանի մէջ ծրագրուած համերգը եւ ուրիշ ձեռնարկներ հարկադրաբար յետաձգուեցան: Իսկ Զարմանազանի ամառնային ճամբարը որոշեցինք պահել, սակայն զայն ձեւափոխելով առցանց հարթակի մը վրայ:

«ՆՅ» - Վերջին հաշուով ժառանգը, ցոյց կու տայ, որ տագնապները որքան որ վնասակար են, նոյնքան ալ շահեկան կողմ մը ունին: Ասանկ կամ անանկ, անոնք դրական ազդեցութիւն ունեցան կրթական, դաստիարակչական, ուսուցողական Գործարարներ փորձարկելու եւ առիթ հանդիսացան հաւաքական կեանքին ստեղծագործական լիցք հաղորդելու: Պակասաձեւ ժառանգը ընդհանրապէս մտածելու առիթ տուաւ կեանքի մասին, կեանքի իմաստը փնտրելու մասին, առողջութիւնը գնահատելու, առողջապահութեան, բնութեան հանդէպ ուշադիր եւ պատասխանատու ըլլալու: Նշեալ հարցերու վերաբերեալ Կիլպեցկեանը ի՞նչ մօտեցում կը ցուցաբերէ:

Ռ.Փ. - Երկրայ արտասովոր վիճակը առիթ կու տայ խորհրդածելու համարողակային հարցերուն շուրջ եւ «Խօսք առ» մրցանակին նպատակն ալ ճիշդ այդ է՝ մարդիկ քաջալերել, որ հայերէնով արտայայտուին զանազան կենսական նիւթերու մասին, տարբեր-տարբեր ձեւերով:

Մենք՝ որպէս հիմնարկութիւն, տարիներէ ի վեր կ'աշխատինք հայերէնի առցանց ներկայութիւնը ապահովելու եւ զարգացնելու համար՝ գիրքեր թուայնացնելով, կայքէջերը քաջալերելով, արհեստագիտական գործիքներ հովանաւորելով...: Ժառանգի պատճառով, մէկ անգամէն, մանկավարժութիւնն ալ առցանց գործադրութեան հարկադրանքի տակ գտնուեցաւ: Այս փոփոխութիւնը շատ արագ եղաւ եւ բնականաբար շատ մը ուսուցիչներ պատրաստ չէին արհեստագիտական նոր գործիքներով տունէն աշխատելու այս նոր ընթացքին:

Ուրիշ հետաքրքրական կէտ մըն ալ կը նշմարենք երկու ամիսէ ի վեր. ընկերային ցանցերու մէջ արեւմտահայերէնի գործածութիւնը կարծէք մէկ անգամէն բարձրացած է եւ աշխուժութիւն մը նկատելի է այս ուղղութեամբ: Օրինակ՝ Լիբանանի մեր ներկայացուցիչն իմացայ, որ խումբ մը երիտասարդներ «Ի՞նչ կայ չկայ» անունով նոր ծրագիր մը մշակած են: «Աղուոր բաներ» կայքը եւ «Ափ»-ը արդէն իսկ իրենց հետեւորդներն ունին: Նոյնանման ուրիշ շատ անձնական նախաձեռնութիւններ կան:

Կարելի է ըսել, թէ անցնող երկու ամսուան ընթացքին արհեստագիտութիւնը եւ լեզուն միասնաբար մուտք գործեցին տուններէ ներս, ինչ որ շատ ուշագրաւ նոր երեւոյթ մըն է: Այսինքն այն ընդհանուր նիւթերու մասին որ դուրսը կը խօսէինք, սկսանք ներսը, մեր տուններուն մէջ խօսիլ՝ հայերէնով, եւ նոր առցանց գործիքներով: Այժմ հարցը հետեւեալն է ի՞նչ կարելի է

ընել, ի՞նչ արդիւնաւէտ միջոցներ գտնել, որ դրական այս քայլը ակելի խորունկ արմատներ նետէ ընտանիքներու մէջ եւ երիտասարդներու մօտ:

Թող անհամեստ չթուայ, բայց մենք արդէն 5-6 տարի է որ այս նպատակին հասնելու հողը կը պատրաստէինք՝ երբեմն լուռ ու մունջ, երբեմն բարձրաձայն. այդ ուղղութեամբ կարելու ներդրումները ըրած ենք (որոնց մի քանիին մասին գործընկերներս քիչ ետք պիտի անդրադառնան): Ճիշդ է, որ տակաւին բոլոր գործիքները պատրաստ չեն: Հինգ-վեց ամիսէն ակելի գինուած պիտի ըլլանք, շարունակելով փորձարկումները: Ահաւասիկ համաճարակի շարիքէն դուրս եկած բարիք մը՝ մարդիկ մեկուսացումի պայմաններուն, իրենց տուններուն մէջ, սկսան ակելի յաճախ (արեւմտա) հայերէնով հաղորդակցիլ եւ հետաքրքրական նորութիւններ ստեղծել, օգտագործելով արհեստագիտական միջոցներ:

«ՆՅ» - Արդեօք արհեստագիտական Գործիքներով հայերէնի ուսուցումը՝ գործիքներու տիրապետելու առումով ձեւով մը ճեղք մը չի ստեղծե՞ր ուսուցիչներուն միջեւ, աւանդական դասաւանդութեամբ սահմանափակուողներու եւ արդիական միջոցներուն տիրապետողներու միջեւ:

Եւ նոյնպէս ընդհանրապէս հայերէն սորվիլ փափաքող մարդոց միջեւ: Պէտք է նկատի ունենալ որ հայերէնի պարագային ամէն մարդ չէ, որ այդ գործիքներէն օգտուելու կարելիութիւնը եւ զանոնք գործածելու ունակութիւնը ունի: Ի վերջոյ այս իրավիճակին յարմարելու խնդիր կը ստեղծուի:



(DR)

Ռ.Փ. - Շիտակ էք: Գիտէք Սփիւռքի մէջ ցաւալի հակասութիւն մը կայ, մանաւանդ կրթական ծիրէն ներս՝ ուր որ արհեստագիտութիւնը կամ նորարարութիւնը զօրաւոր է, հոն լեզուն ընդհանրապէս տկար է, թէ՛ աշխարհագրական եւ թէ՛ տարիքային գեոմի վրայ՝ սերունդներու միջեւ: Ուր որ լեզուն զօրաւոր է, հոն արհեստագիտական ոլորտը շատ անգամ տկար է: Եւ ասիկա հակասութիւն մըն է, որ մեր իրականութեան մաս կը կազմէ: Ժառանգը արագացուց ընթացքը արհեստագիտական գործիքներու օգտագործման, ներմղում մը տուաւ, ինչպէս նշեցինք: Պէտք է նաեւ նկատի ունենանք, որ յաջորդ 10-20 տարիներու ընթացքին մարդուփ որոշ փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ սերնդափոխութեան պատճառով. նորարարութեան եւ մանկավարժական նոր մեթոտներուն տիրապետելու առումով ակելի արհեստավարժ ուսուցիչներ կը պատրաստուին ներկայիս:

Բացի ասկէ, որոշ շրջաններ զրկուած են համացանցի մնայուն կապ ունենալէ: Կարելի է Սուրիոյ կամ Լիբանանի օրինակը բերել, ուր էլեկտրական հոսանքի անշատումներուն հետեւանքով յաճախ համացանցի կապը կը կտրուի եւ կարելի է երեւակայել, թէ որքան դժուար կացութիւն կը ստեղծուի ուսուցիչներուն համար:

Բայց միւս կողմէ, կարելի չէ անտեսել, թէ 21-րդ դարուն կ'ապրինք եւ իւրաքանչիւր ուսուցիչ պարտաւոր է գտնել նուազագոյն չափով ծանօթ ըլլալու արհեստագիտական աշխարհին: Ինչպէս վերը նշեցի, ուսուցիչներուն յատկացուած մրցանակը ճիշդ այս նպատակին կը ծառայէ: Կ'ուզենք քաջալերել ուսուցիչները, գիտակից ըլլալով որ ամէն ոք կարելիութիւնը չունի մասնակցելու այս արշաւին, քանի որ կան ուսուցիչներ, որոնք դժբախտաբար անձնական համակարգիչ նոյնիսկ չունին, մանաւանդ տնտեսապէս ակելի նուազ զարգացած երկիրներու մէջ:

«ՆՅ» - Աշխարհը արագօրէն կ'ընթացայ դէպի թուայնացում, տեղեկատուական արհեստագիտականացում: Այս ընթացքը կը պահանջէ խոշոր ներդրումներ: Հայութեան համագաղութային կառույցները Գալուստեան արտահրաւերներ դիմագրաւելու միջոցները ունին: Յաջողութեան ի՞նչ երաշխիքներ ունիք:

Ռ.Փ. - Կը խորհիմ թէ միջոցները կան: Հայկական Սփիւռքը աղքատ սփիւռք մը չէ, բայց միայն միջոցները չեն բաւեր, ծրագրերը իրագործելու տեսլականը եւ փափաքն ալ պէտք են: Իսկ յաջողութեան առաջին երաշխիքը այն է, որ ունենանք ղեկավարներ որոնք հայերէն լեզուին եւ լեզուն փոխանցելու դպրոցական առաքելութեան կարեւորութիւն կու տան: Այս գործին հանդէպ հաւատք ունենալն ալ հրամայական է: Եւ անշուշտ հաւատքը կամ տեսլականը իրականացնելու միջոցները տրամադրելը անհրաժեշտ է. այլապէս միայն լոզունգի մակարդակին կը մնանք, ինչպէս շատ անգամ կ'ըլլայ, եւ ատկէ արդիւնաւէտ ոչինչ դուրս կու գայ:

Սփիւռքի կրթական «վէճ»-երը դպրոց բանալու կամ գոցելու վրայ կը կեդրոնանան: Ե՛րբ լսած էք շինիլ բանավէճ մը դպրոցին կրթական առաքելութեան կամ մանկավարժական լուրջ նիւթերու եւ հարցերու շուրջ: Այսինքն՝ խօսակցութիւն՝ դպրոցի շէնքին «միջուկ»-ին մասին, եւ ոչ թէ շէնքը բաց կամ գոց պահելուն մասին: Կարծէք մանկավարժութեան որակը կապ

չունի դպրոցի մը յաջողութեան հետ: Որպէս համայնք կ'ողբանք որ ծնողներ իրենց զաւակները հայկական դպրոց չեն դրկեր,— ուր որ գոյութիւն ունին,— բայց քաջութիւնը չունինք հարցադրելու թէ ինչո՞ւ: Ատոր պատասխանը որոշ ձախողութիւններու հետեւանքն է այլազան մակարդակներու վրայ, ղեկավարութենէ մինչեւ մանկավարժական ըմբռնում:

Սփիւռքը պէտք է ստանձնէ իր հարցերը լուծելու ղեկավարի պատասխանատուութիւնը: Արեւմտահայերէնը Սփիւռքի հարցն է եւ Սփիւռքն է, որ պէտք է լուծէ իր հարցերը, իր ղեկավար դասակարգի առաջնորդութեամբ: Կիւլպէնկեան հիմնարկութիւնը իր միջոցներով եւ կարելիութեան սահմաններուն մէջ այս աշխատանքին մէկ բաժինը կ'իրագործէ, բայց Սփիւռքի մէջ մեր Բաժանմունքին շատ աւելի մեծ կազմակերպութիւններ կան:

Ի դէպ, Հայաստանի մէջ արհեստագիտութեան զարգացման շատ յստակ տեսլական մը գոյութիւն ունի երկրին ղեկավարութեան մօտ, բայց ան ոչ թէ լեզուի, այլ տնտեսութեան բարգաւաճման առնչուած է, ինչ որ շատ հասկնալի է:

«ՆՅ» - Ճիշդ է որ Սփիւռքը աղքատ չէ, բայց ցարդ այդ տեսլականը չէ ունեցած: Ան նաեւ կառավարման այլ եղանակով մը շեշտը ազգային այլ խնդիրներու վրայ դրած է, այդ ձեւով ալ աղքատացնելով Արեւմտահայութեան մշակութային ժառանգութիւնը, որուն անբաժան մասնիկն է լեզուն: Ընդհանրապէս, հայերէնի պարագային, կ'անդրադառնանք, ի վերջոյ, որ արհեստագիտութեան կալուածէն ներս, հայերէնով կրթական ծրագրեր, լեզուագիտական դաստիարակչական խաղեր, գիտական բնօրէն տեսանիւթեր մշակելու 20-30 տարուան բաց մը կայ: Այս ուղղութեամբ ի՞նչ լուծում կ'առաջարկէք:

Ռ.Փ. - Շիտակ է, որ Սփիւռքի կրթական մարզին մէջ հակայական բաց մը կայ: Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւն եւ լեզու պահելը իրապէս շատ պահպանողական ընթացք առած է եւ այժմ է վտանգաւորը: Պահպանողական այն իմաստով որ ինչ որ ունինք սառեցնենք որպէսզի չկորսնցնենք: Այսպէսով նորը ստեղծելու բաւարար առիթ չենք տուած երիտասարդներուն: Պատմական օրինակ մը տամ՝ 1920-ական թուականներուն տեղի ունեցածը այս երեւոյթին հակապատկերն էր. դաշնակցական, հնչակեան եւ ռամկավար շրջանակներուն մէջ սփիւռքացած եւ հայախօս ժողովուրդ մը կերտելու շատ յստակ տեսլականը կար, հիմնուելով երիտասարդութեան վրայ: 50-60-ական թուականներուն երիտասարդութեան մէջ եւս աշխուժ շարժում մը ստեղծուեցաւ, որ 70-ականներուն կարծէք թէ աւելի պահպանողական երանգ ստացաւ. լեզուն սկսաւ կտրուիլ ներկայէն եւ կառչեցաւ միայն անցեալին ու միայն հայկականին: Եւրոպայի կամ Հիւսիսային Ամերիկայի մէջ մշակութային նորարարութիւնը քիչ թէ շատ հող գտաւ, բայց հոն ալ դպրոցներու բացակայութեան պատճառով լեզուն չբարգաւաճեցաւ...:

«ՄՇԱԿՈՅԹԸ ՓՈՆԱՆՅԵԼԻՔ ԾՐԱՐ ՄԸ ՉԷ, ԿԵՐՏՈՒԵԼԻՔ ԸՆԹԱՅՔ ՄԸՆ Է»

Այսօր կարելի է միջոցներ հայթայթել, որպէսզի երիտասարդ սերունդը իր ձեւերով սփիւռքեան մշակոյթ մը ստեղծէ: Չեր հարցումին պատասխանը ասոր մէջն է. միջոցներ տրամադրել որ հայերէնով ստեղծագործութիւն տեղի ունենայ եւ ոչ թէ յաջորդ սերունդին ըսել, քարոզել կամ նոյնիսկ պարտադրել թէ իր մշակոյթը ի՞նչ պէտք է ըլլայ: Մշակոյթը փոխանցելիք ծրար մը չէ, կերտուելիք ընթացք մըն է:

Անշուշտ Սփիւռքը կղզիացուած չէ: Առնչութիւն ունի Օտարին հետ, եւ անպատճառ Հայաստանի հետ: Սակայն պէտք է ի մտի ունենալ, որ ամէն ինչին սկիզբը եւ վերջը Հայաստանը չէ, մանաւանդ 4-րդ, 5-րդ սերունդի Սփիւռքահայուն համար: Բայց թող սխալ չհասկնուի, Սփիւռքահայը անշուշտ որ իր կապը պիտի պահէ Հայաստանի հետ, ու անկէ ներշնչուի: Բայց միւս կողմէ Հայաստանն ալ առհասարակ մշակութային-ընկերային հողին վրայ պահպանողական կեցուածք մը ունի եւ այդ մարզերուն մէջ իբրեւ դուրսէն եկած գաղափարներ կը քննադատէ ամէն տեսակի նորարարութիւն (անշուշտ բացառութիւններ կան): Նորէն կրկնեմ, Սփիւռքը պէտք է ստանձնէ իր հարցերը լուծելու պատասխանատուութիւնը. ուրիշ խօսքով՝ իր ապագան դրսեւորելու ղեկավարութիւնը ստանձնէ: Ես լաւատես եմ, որովհետեւ երիտասարդութեան մէջ կը տեսնեմ արեւմտահայերէնը պաշտպանող եւ գործածող սերունդ մը, որ աշխուժացած է: Կիւլպէնկեան հիմնարկութիւնը անոր թիկունք կանգնելու եւ զայն քաջալերելու իր համեստ նեցուկը կը տրամադրէ:

«ՆՅ» - Պսակաձեւ ժափրը ձեւով մը առիթ ստեղծեց նման հարցեր համապարփակ ձեւով քննարկելու: Բայց տակաւին սկիզբն ենք եւ հաւանաբար մեր առօրեայ կենցաղին մէջ շատ բաներ պիտի փոխուին...:

Ռ.Փ. - Գիտէք, առցանց, հեռակապով ժողովները, հանդիպումները, դասախօսութիւնները հոյակապ առիթ կու տան բազմախօսակցութիւններու, որոնք կը դիտուին ու կ'ունենան շարժարժի շորս ծագերը գտնուող հազարաւոր Հայերու կողմէ, առանց կազմակերպչական սահմանափակումներու: Նման առիթները պէտք է օգտագործենք՝ էական հարցերու շուրջ գաղափարներ փոխանակելու համար:

«ՆՅ» - Ամէն պարագայի, «Նոր Յառաջ» փորձեց հայերէնի դա-

սաւանդման եւ հայերէն լեզուի հետ առնչուած անհատական կամ հաստատութեանական տարբեր նախաձեռնութիւնները ցանկազրել ու տարածել, որպէսզի աւելի լայն շրջանակներու կողմէ փորձարկուին: Պէտք է ըսել, թէ բաւական հետաքրքրական անհատական նախաձեռնութիւններ գտանք գաւազան կայքէջերու վրայ: Անոնցմէ վերջինը Արցախի մէջ հաստատուած «Գրքասէր» կայքն է, որուն անդրադարձանք Մայիս 21-ի մեր ֆրանսերէն յատկանշին մէջ: Հոն գետնտեղուած է արեւելահայերէն եւ արեւմտահայերէն ընթերցուած գրականութիւն: Օրինակ՝ արեւմտահայերէնով նշանաւոր հեղինակներէ շուրջ 70 ընթերցումներ կան՝ Անդրանիկ Ծառուկեան, Յակոբ Պարոնեան... , զորս կարելի է անվճար ունկնդրել...:

Ռ.Փ. - Այո՛, հայկական աշխարհին մէջ նման կայքէջեր գոյութիւն ունին: Որքան շատ, այդքան լաւ:

«ՆՅ» - Անդրադառնանք նաեւ միջազգային հասարակութիւնը յուզող էական խնդրի մը. «Google»-ի կամ «Microsoft»-ի նման մեծ ընկերութիւնները, որոնք հանդիպումները կազմակերպող ու տեղեկութիւնները փոխանակելու գլխաւոր հարթակներն են, անոնք են նաեւ գլխաւոր շահաւորները, եւ մենք ուզենք կամ չուզենք անոնց հսկայական միջոցներէն կախեալ ենք: Այս մարզէն ներս ալ նոր դերակատարներ կան, որոնք միջքո-հարթակներ կը ստեղծեն, որոնք նաեւ տեղ մը կ'ապահովեն տեղեկութիւններու անվտանգութիւնը: Պէտք է մտածել այդպիսի հարթակներուն ուժ տալու, զանոնք քաջալերելու, անոնց նեցուկ կանգնելու մասին, որպէսզի կարելի ըլլայ ամբողջական ցանց մը ունենալով՝ այդ «մեծերէն» կախեալ չըլլալ: Այսպիսի կարեւոր նախաձեռնութիւն ստանձնած է Հայաստանի մէջ Իրական դպրոցի հովանաւոր Ինսթիտյութ ընկերութիւններու ցանցը:

Ռ.Փ. - Անշուշտ որ կարելիութեան սահմաններուն մէջ պէտք է քաջալերել նշեալ միջքո-հարթակները, սակայն իրականութիւնը այն է, որ տեղ մը ստիպուած պէտք է անցնիլ այդ մեծ ցանցերէն: Կարելի է հարթակներ ստեղծել, որ օրինակ՝ միայն «Amazon»-էն կախեալ չըլլանք: Բայց հետազոտութեանց պարագային քիչ մը դժուար է «Google»-էն անկախանալը: Կա գաղափար է: Պէտք է մտածել այդ մասին:

«ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ»


ՇՈՂԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ

(Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին միացած է 2018-ին, կը գործակցի որպէս խորհրդատու եւ կարգ մը ծրագրերու պատասխանատու, մանաւանդ լեզուի եւ արհեստագիտութեան ծիրէն ներս)

«ՆՅ» - Պսակաձեւ ժափրի երեւան գալով Կիւլպէնկեան հիմնարկութիւնն ալ նոր ծրագրերով ասպարէզ իջաւ, նոր դուրս բացաւ լեզուի գործածութեան, երիտասարդութեան ներգրաւումին՝ համայնքային կեանքէն ներս, մտաւորական եւ արուեստագիտական ստեղծագործական ուժերը գործի լծելու նպատակով: Դիմողներ եղած են արդէն, արձագանգներ կան:

Շողեր Մարկոսեան - Կը հաւատանք որ լեզուն երբեք ալ ինքնանպատակ միջարկ մը չէ, այլ սերտօրէն կապուած է մտածումի կալուածին հետ. այսինքն լեզուի կենսունակութիւնը կ'ապահովուի նաեւ մտածողական աշխատանք մը խթանելով. ճիշդ այս է նպատակը «խօսք առ» մրցանակին եւ կրթականի «Նորարար մշակոյթ» ծրագրին:

«Խօսք առ» մրցանակը կը վերաբերի համամարդկային հիմնահարցները մեր համայնքային կեանքին մէջ ներառելու կարելիութեան, առիթ տալով որ երիտասարդ,— եւ ինչու չէ նաեւ փորձառու,— միտքեր փոխանակեն, խորհրդակցին եւ արտայայտուին այս ուղղութեամբ: Համաձայնակի պայմաններուն տակ ծնած այս մրցանակը եզակի է իր տեսակին մէջ, եւ շատ հետաքրքրական պիտի ըլլայ տեսնել թէ այս առաջին հնարաւորութիւնը ինչպէ՞ս պիտի օգտագործուի, եւ թէ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհասփիւռ մեր համայնքներու արագ հակազդեցութիւնը, հաստատելով այս մրցանակին ընդմէջէն՝ Հայուն համարկումը որպէս աշխարհի քաղաքացի, ըլլայ այդ Սփիւռքի կամ Հայաստանի մէջ:



(ԾՊ)

Հարկ է նշել որ այս մրցանակին նպատակն է առաջին առիթ մը տալ որ մարդիկ, յատկապէս երիտասարդները, իրենց կարծիքները յայտնեն կարեւոր նիւթերու շուրջ, որոնք համամարդկային են եւ անխուսափելիօրէն կը վերաբերին նաեւ համայնքայինին. հոս էականը առաջին քայլ մը առնելն է, եւ ո՛չ թէ նշաձողը անհասանելի տեղ մը դնելը՝ լեզուի իմացութեան կամ նիւթերու հասունութեան առումով:

Ինչ կը վերաբերի կիբանանի «Նորարար մշակոյթ» ծրագրին, Հիմնարկութիւնը այս միջոցով կը վերահաստատէ իր յանձնառութիւնը լեզուի կենսունակութեան հանդէպ: Այս նպատակին հիմնական նպատակն է խթանել ստեղծագործ միտքերը՝ մշակելու արեւմտահայերէնով յղացուած եւ կիրարկուած նորաշունչ նախաձեռնութիւններ: Ուրեմն, այս ծրագիրը կը միտի առաջին հերթին երիտասարդներուն մէջ արեւմտահայերէնով ստեղծագործելու փափաք մը յառաջացնելու, ինչպէս նաեւ որոշ շափով մշակութային արդիականութիւն մը գոյացնելու:

Այս նպատակի ծրագրին հիմնական նպատակներէն է հնարաւորութիւններ ստեղծել որ հայախօսներ, նամանաւանդ երիտասարդներ, այս ուղղութեամբ սկսին աշխատիլ եւ զգան որ իրենց մօտեցումները, մտահոգութիւնները եւ ստեղծագործութիւնները կարեւոր տեղ մը ունին մեր իրականութեան մէջ:

Այս երկու ծրագրերն ալ կը հետապնդեն քննարկումի եւ մասնակցութեան մշակոյթի մը ստեղծումը, ուր երիտասարդներուն հարթակ մը կը տրուի արտայայտուելու, գործածելով այն միջոցները որոնք իրենց արտայայտուելու եղանակին հայերէնը գործածելով որպէս բնական միջարկ:

«Նօսք առ» մրցանակը փոքր պարգեւով կը վերաբերի լայն թիւով դիմողներու, այսինքն յիսուն մրցանակ պիտի յատկացուի (25 Սփիւռքէն եւ 25 Հայաստանէն), իսկ կիբանանի «Նորարար մշակոյթ» ծրագիրը աւելի մեծ պարգեւով կը վերաբերի հինգ մեծ մրցանակներու:

Հետաքրքրական դիմումներ արդէն կատարուած են երկու ծրագրերու պարագային ալ: Կ'ուզեմ նշել որ դիմողները յաճախ կ'ուզեն խորհրդակցիլ Հիմնարկութեան հետ՝ ճիշդ ըմբռնելու համար ծրագրին պարունակը, տրուած ըլլալով որ այս երկու աննախընթաց մրցանակները ստեղծագործելու նոր պայմաններ կը ստեղծեն երիտասարդ շրջանակներուն մէջ:

«ՆՅ» - Աշխարհը արագընթաց կ'ընթացայ դէպի թուայնացում, տեղեկատուական արհեստագիտականացում: Այս ընթացքը կը պահանջէ ներդրումներ: Հայութիւնը միջոցները ունի՞ դիմագրաւելու նման մարտահրաւեր: Ի՞նչ է ասոր յաջողութեան երաշխիքը:

Շ.Մ. - Այս ոլորտին մէջ ալ Հիմնարկութիւնը իր ներդրումը ունի, որ լեզուն, արեւելահայերէն թէ արեւմտահայերէն, քայլ պահէ արդի արհեստագիտական նուաճումներուն հետ: Ամէնէն կարեւոր նախաձեռնութիւններէն թուենք՝

ա) Ուղղագրիչներու ծրագիրը՝ համացանցային, հեռաձայնային եւ համակարգչային բոլոր հարթակներուն համար, ինչ որ պիտի խթանէ ամէնօրեայ մեր հաղորդակցութիւններուն մէջ վերջապէս հայատառ գրել: Այս ընթացքին, նայիրի բառարաններու կայքէջը կը համալրուի գանազան նոր եւ հազուագիտ բառարաններով:

բ) Միախառն միաբանութեան թերթերու եւ պարբերաթերթերու թուայնացումը, համագործակցութեամբ՝ Հայաստանի Գիտութիւններու ակադեմիային հետ. այսօր հարիւր հազար էջէ աւելի թուայնացուած նիւթ արդէն գոյութիւն ունի, որոնց մօտ կէսը ցանկագրուած է: Շուտով պիտի ստեղծուի յատուկ կայքէջ մը՝ նուիրուած այս հարուստ հաւաքածոյին:

գ) Հիմնարկութիւնը կ'օժանդակէ նաեւ Հայաստանի մէջ երկու ծրագրերու. մէկը կը վերաբերի արեւմտահայերէնի «ժառանգարանին» (Treebank) որուն շնորհիւ կը կատարուի քերականական եւ լեզուական մեքենական վերլուծութիւններ, ինչ որ ուղղակի կ'օգնէ լեզուն համարկելու համակարգչային մտածողութեան մէջ: Միւս ծրագիրը կը վերաբերի բառակազմական առցանց հարթակի մը ստեղծումին, որուն նպատակն է բառերու խորքային քերականական եւ լեզուաբանական վերլուծումը:

Հիմնուելով Հիմնարկութեան սկզբունքներուն վրայ, նշենք որ վերոնշեալ բոլոր ծրագրերը հասանելի են անվճար, եւ բոլորին:

«ՊՍԱԿԱԶԵՒ ԺԱՀՐԸ ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՒՆԵՑԱԻ ՆԱԵՒ ԴՐԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ ՄԸ»

ԳԱՅԻԱՆԷ ՄԱԾՈՒՆԵԱՆ

(Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքի Լիբանանի ներկայացուցիչ եւ ծրագրերու պատասխանատու)

«ՆՅ» - Ուսուցիչներուն համար ալ նոր ասպարէզ մը կը բացուի՝ առցանց ուսուցումը: Նաեւ տագնապի պահ մը, բոլոր աճունց համար որոնք կարելիութիւն պիտի չունենան յարմարելու, արդիական գործիքներ գործածելու: Յատուկ մրցանակ մը յայտարարած էք նաեւ ուղղուած ուսուցիչներուն՝ դասաւանդման նոր եղանակներ հնարողներուն: Ինչպէ՞ս են ու-

սուցիչներուն հակազդեցութիւնը, մասնակցութիւնը, սպասումները:

Գայիանէ Մաժունեան - Պսակաձեւ ժահրին պարտադրած մեկուսացումին պատճառով, բոլորիս առօրեայ աշխատանքները ենթարկուեցան փոփոխութեան: Կրթական համակարգին համար այս մեկուսացումը եւ անկէ յառաջացած հեռավար ուսուցումի փորձառութիւնը առիթ մը եղաւ, կրթութեան ոլորտէն ներս, վերանայելու եւ վերարժեւորելու շատ մը հարցեր: Հայկական դպրոցներուն մեծ մասը, որոնք մինչ այդ կը տատանւէին արհեստագիտութեան



(ԾՐ)

ընձեռնած հնարաւորութիւններէն օգտուելու, իրենք զիրենք դէմ յանդիման գտան իրավիճակի մը, ուր պէտք էր շատ արագ ձեւով յարմարիլ: Մեկուսացումի առաջին իսկ օրերուն, ընկերային ցանցերուն վրայ սկսան յայտնուիլ հայկական վարժարաններու ուսուցիչներուն կողմէ պատրաստուած ուսուցողական նիւթեր, որոնց հանդէպ հետաքրքրութիւնը կարծէք դասարանային պարունակէն դուրս էլաւ: Ինչպէս առածը կ'ըսէ «Ձկայ չարիք՝ առանց բարիքի». պսակաձեւ ժահրը մեր կրթական փորձառութեան մէջ ունեցաւ նաեւ դրական դրսեւորում մը:

Հիմնարկութիւնը նկատեց այս շարժը եւ չէր կրնար անտարբեր մնալ սահմանափակ պայմաններու մէջ, եւ խիստ անձնական միջոցներով իրականացուած այս մեծ աշխատանքներուն նկատմամբ: Մեր իրականութեան մէջ, ուսուցիչները գնահատելու սովորութիւնը մշտական բնոյթ մը չունի: Տարին մէկ անգամ, ուսուցիչներու տօնին՝ լողունգներ եւ հետտրական գովասանքներ կը թափին անոնց գլխուն, առանց անդրադառնալու խորքային շատ մը հարցերու: Նկատի առնելով որ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքի ընդհանուր ծրագրերուն առանցքը արեւմտահայերէնի արդիականացումին ուղղուած աշխատանքներն են, ուզեցիք մենք մեր ձեւերով քաջալերել հայերէնով դասաւանդող այն ուսուցիչները, որոնք կամքէ անկախ պատճառներով իրենց ուսուցումը տեղափոխեցին առցանց հարթակներ: Մրցանակը յայտարարեցինք Ապրիլի կիսուն եւ ան շատ արագ տարածուեցաւ ընկերային ցանցերուն վրայ: Աշխարհի տարբեր երկիրներէ, հայերէնով տարբեր նիւթեր դասաւանդող ուսուցիչներէ դիմումներ կը ստանանք (լեզու, պատմութիւն, գիտութիւն, թուաբանութիւն, կրօն, արուեստ):

Ուսուցիչներուն հետ մեր նամակագրութիւնը դրական պատկեր մը կը սփռէ: Գրեթէ բոլոր մասնակիցներուն համար Հիմնարկութեան այս գնահատական մրցանակը կը հանդիսանայ մեծ քաջալերանք մը: Յաղթեն կամ ոչ, առիթը ստեղծուեցաւ որ մեր դպրոցներուն մէջ աշխատող ուսուցիչները (որոնց ջախջախիչ մեծամասնութիւնը կիներ են) քիչ մը աւելի համարձակ դառնան եւ առաջին հերթին գնահատեն իրենց իսկ աշխատանքը: Բնական է որ մեր ստացած նիւթերը բազմազան են եւ իրենց բովանդակութեամբ, եւ երեւոյթով: Նոյնիսկ համացանցի ստեղծած պայմաններուն մէջ կը տեսնենք դասական մտածողութեան եւ մեթոտաբանութեան հետքերը: Համեմատաբար երիտասարդ ուսուցիչները աւելի համարձակ են եւ կարծես ներկայ պայմանները իրենց համարձեռնառու: Դասարաններէն ներս արհեստագիտական սարքաւորումներ չունենալով անոնք յաճախ չէին կրնար իրենց ուսուցումը զարգացնել եւ գրաւիչ դարձնել: Այսօր, անոնք ազատ են ընտրելու միջոցներ, որոնք կը բարելաւեն երախաններուն սորվելու փորձառութիւնը:

Այս առիթով նաեւ նամակներ կը ստանանք շատ ուսուցիչներէ, որոնք մեզի հետ կը կիսեն իրենց դիմագրաւած գծաւորութիւնները: Անշուշտ մենք բոլոր նամակներուն կը պատասխանենք, բայց միշտ չենք կրնար օգտակար դառնալ բոլորին: Շատերու համար Հիմնարկութիւնը փրկարարի բնոյթ ունի, բայց մենք այսօր կը փափաքինք որ հայ իրականութեան մէջ (մանաւանդ Սփիւռքի) անօգնականութեան եւ ճնշուածութեան երեւոյթները վերանան եւ մարդիկ մեզ դիմեն որպէս գործակից եւ ոչ փրկարար:

Պէտք է նշենք, որ այս մրցանակը քաջալերական բնոյթ ունի: Մրցանակին նպատակը մեզի դիմողներուն ջանքերը գնահատելն է, բնականաբար որոշ չափանիշերու սահմաններուն մէջ: Երկու հանգրուաններով արդէն 16 մրցանակներ տրուեցան աշխարհի տարբեր երկիրներէն մեզի դիմած ուսուցիչներու: Մրցանակին պայմանաժամը Մայիս 31-ն էր եւ յանձնախումբը տակաւին կը կատարէ երրորդ փուլին 80-է աւելի դիմումներու արժեւորումը: Դիմումները աշխարհի տարբեր կողմերէն են, ինչպէս՝ Արժանութիւնէն, Յունաստանէն, Ռուսաստանէն, Կիբանանէն, Թուրքիայէն, Եգիպտոսէն, ԱՄՆ-էն եւ այլ երկիրներէ: Ընդհանուր առումով ստացած ենք 101 դիմում: Նախապէս յայտարարած էինք որ 30 նպաստ պիտի տրամադրենք, սակայն պիտի փորձենք այս թիւը բարձրացնել՝ հասնելու համար աւելի մեծ թիւով ուսուցիչներու:

Նշենք նաեւ, որ այս մրցանակը նպատակ չունի ուսուցիչները դասակարգելու կամ կրթական ոլորտէն ներս անոնց ունեցած վաստակը դատելու: Բնական է որ մեզի կը դիմեն անոնք որոնք կը լսեն մրցանակին մասին եւ

լորին համար, երբ մէկ օրէն միւսը դպրոցները փակուեցան եւ կրթութիւնը ընդհանրապէս առցանց դասաւանդութեան վրայ հիմնուեցաւ: Ամէն մէկ դպրոց եւ ամէն մէկ միջավայր կրցած չափով յարմարեցաւ պայմաններուն, տեղ-տեղ՝ շատ գործնական կերպով, նոր լուծումներ բերելով:

«ՆՅ» - Այս պայմաններուն մէջ, Սփիւռքի դպրոցներուն պարագային, տուեալ երկրի պետական կրթական ծրագրին առցանց անցումին զուգահեռ, հայերէնին ալ ժամանակ ու միջոց հայթայթելու հարցը կը ծագի...

Ա.Կ. - Անշո՛ւշտ: Այդ մէկը կախեալ է դպրոցներու մէջ հայերէնի ծրագիրը ղեկավարողներու անվերապահ ներգրտմէն: Օրինակ՝ վերջերս Աթէնքի դպրոցներէն մէկուն մէջ՝ տնօրէնութեան եւ հայերէնի ուսուցիչներուն միջեւ համագործակցութեան գոյացած արդիւնքը այնպիսի ձեւով ներշնչած էր միւս ուսուցիչները, որ անոնք կրթական մնացեալ ծրագրերը փորձեր էին համապատասխանեցնել հայերէնի համար որդեգրուած եղանակին: Այսպիսի գրական երեւոյթներու կը հանդիպինք սակայն աւելի յաճախ հո՛ն ուր արդէն իսկ մանկավարժական առումով փոփոխութիւն գոյացած է: Մարդկային հաղորդակցութեան առցանց պայմանները ինքնին արդէն կը փոխեն ուսուցիչ-աշակերտ կապերուն բնոյթը: Եթէ դասարանը ուսուցչին շուրջ կեդրոնացած ու սովորական մեթոտներու վրայ հիմնուած էր, հիմա պէտք է միջոցներ որոնել աշակերտին հետ նոր տեսակի կապեր հաստատելու համար: Իսկ հո՛ն ուր արդէն աշակերտակեդրոն էր, ուսուցիչը ուղեկիցի դեր ստանձնած ըլլալով՝ շատ աւելի հանգիստ կրնայ առցանց շարունակել հաղորդակցութիւնը: Այս կեցուածքն է, որ Զարմանազանը որդեգրած է որպէս սկզբունք, փորձած է իրագործել ճամբարի ընթացքին եւ սորվեցնել ուսուցիչներուն ուղղուած դասընթացքի ծիրէն ներս:

«ՆՅ» - Կենթադրեմ, որ մինչեւ հիմա տարբեր երկիրներու մէջ գործող հայկական դպրոցներու մասին վիճակագրական տուեալներ չունինք իմանալու համար, թէ այդ կրթօճախները իրենք ընդհանրապէս հեռակապ աշխատանքի համակարգը ստեղծած են, թէ՞ ոչ, որպէսզի ի պահանջել հարկին օգտագործեն զայն: Օրինակ՝ Ֆրանսայի պարագային կարգ մը դպրոցներու մէջ իբրեւ պետական կրթական ծրագիր այդ դրութիւնը արդէն հաստատուած ըլլալով՝ համաճարակի օրերուն աշակերտները շատ արագ կրցան առցանց ստանալ իրենց օրուան դասը եւ փոխադարձաբար իրենց կատարած վարժութիւնները դրկել ուսուցիչներուն: Ասոր կողքին, շաբաթը մէկ կամ երկու անգամ ալ դասընթացքը ուղղակի առցանց տեղի կ'ունենար: Այսինքն այս երկու դրութիւնները՝ դասերու ամէնօրեայ առաքումը յատուկ համացանցային նամակատուփով եւ առցանց դասարաններու հաստատումը, զուգահեռաբար կ'աշխատէին, ինչ որ ճնողներուն համար մեծ անակցկալ մըն էր: Հարցումը հետեւեալն է. հայկական դպրոցները արդեօք հեռակապ աշխատանքի համակարգը հաստատած են, թէ՞ ոչ: Իսկ եթէ այդ համակարգը արդէն գոյութիւն ունի, որքանով հայերէնի դասաւանդութեան պահերը ներառուած են ծրագրին մէջ:

Ա.Կ. - Սփիւռքի դպրոցները Միջին Արեւելքէն մինչեւ Ֆրանսա, Արժանթինէն մինչեւ Գանատա տեղական եւ տնտեսական պայմաններուն ենթարկուած են: Հեռակապ աշխատանքի համակարգի մը հաստատումը եւ յաջող կիրարկումը կախեալ են տուեալ պայմաններէն: Եթէ ձեր ըսածը հայերէն լեզուով հեռակապ տուն-դպրոց կայուն հարթակներ ստեղծելու մասին է, հաւանաբար քիչերը պատրաստ էին այդ հրուանդանը անցնելու: Բայց կը վստահեցնեմ ձեզի. ամէն կողմ՝ հայերէնով շատ մը դասաւանդողներ արագ եւ աշխուժ ձեւով յարմարեցան նոր կացութեան, եւ յաճախ կարողացան ծնողներուն հետ իրենց հաղորդակցութիւնը զօրացնել ու խմբային աշխատանքին ուժ տալ, հեռակապ դասաւանդման գրական ձեւեր ստեղծելով կամ որդեգրելով: Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին կողմէ հաստատուած «Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»-ին ցոյց տուած արդիւնքը փաստն է այդ աներեւակայելի աշխուժութեան: Մէկ ու կէս ամսուան ընթացքին հարիւրէ աւելի ուսուցիչներ մասնակցեցան մրցանակին: Փափաքը, կարողութիւնը, ձիրքը՝ բոլորը կան ու կան: Ուրեմն այս նոր փորձառութեան անդին է որ պիտի ստեղծուի թերեւս աւելի մնայուն ցանցային համակարգ մը, շնորհիւ նոր յայտնուած այս եռանդին:

«ՆՅ» - Յառաջիկայ Օգոստոսին պիտի կայանար Զարմանազանի չորրորդ ճամբարը, որ համաճարակի պատճառով պիտի վերափոխուի առցանց հարթակի: Կրնայի՞ք մանրամասնութիւններ հաղորդել: Ինչպէ՞ս պիտի վերակազմակերպէք այդ հսկայական աշխատանքը:

Ա.Կ. - Պայմաններու բերումով Զարմանազանը ձեւ ու կերպարանք փոխեց եւ դարձաւ «Զարցանց 2.0»: Այս ծրագիրը Գալուստ Կիւպէնկեան հիմնարկութեան եւ Հազար ու մէկ աշխարհ ընկերակցութեան համար աննախընթաց մարտահրաւեր մըն է: Ինչպէս ըսի՝ առցանց աշխատիլը ձեւով մը Զարմանազանի ծրագրէն դուրս կ'իյնար: Մինչեւ իսկ տեղւոյն վրայ հեռաձայններու եւ համակարգիչներու գործածութիւնը սահմանափակ էր: Խորքին մէջ Զարմանազանը կապ մըն էր որ սկսած էր տարիէ-տարի ամրապնդուիլ ու զարգանալ երիտասարդներու եւ ուղեկիցներու միջեւ եւ այդ կապը ձեւով մը շարունակական էր: Զուգեցինք որ ստեղծուած կապը փրթի: Ընդհանրապէս «Զարցանց 2.0»-ը որոշ չափով անկախ պիտի ըլլայ Զարմանազանէն, բայց կ'ուզէ հաւատարիմ մնալ նոյն մանկավարժական

սկզբունքներուն, գիտակից ըլլալով հանդերձ որ խաղին օրէնքները բոլորովին տարբեր են: Պէտք է կարենանք ապաւինիլ Զարմանազանի փորձառութեան, հոն ստեղծուած կապերուն. խորհիլ, թէ ինչպէ՞ս կարելի է անոնց հիման վրայ ծրագրեր մշակել: Կեդրոնական սկզբունքը նոյնն է. մասնակիցներուն մօտ ստեղծագործական կարողութիւնները զարգացնել եւ այդ նպատակով անոնց միջեւ կապերը ամրացնել: Կը խորհինք որ այս նոր փորձառութիւնը անսպասելի գրական հետեւութիւններ պիտի ունենայ մօտ ապագային: Զարցանցի նոր ստեղծած առցանց հայախօս վայրը մուտք պիտի գործէ տուներէն ներս եւ այդպէսով լեզուի գործածութիւնը պիտի ամրապնդուի մտերիմ միջավայրի մէջ: Լեզուն նաեւ պիտի դառնայ անձերու միջեւ առցանց լեզու մը: Օրինակ՝ Զարմանազանի ձայնասփիւն՝ «Զարմանաձայն»-ը պիտի փոխադրուի նոր հարթակի վրայ եւ պիտի ընդգրկէ զանազան վայրերու մէջ գտնուող մասնակիցները: «Զարցանց»-ը նաեւ կրնայ տարուան ընթացքին առցանց առօրեայ լեզու մը ունենդրելու առիթ հանդիսանալ: Այս բոլորը խմբային լուրջ աշխատանք կը պահանջէ: «Զարցանց»-ը կ'ուզէ վայր մը ըլլալ, ուր պատանիներ եւ երիտասարդներ ծանօթանան, մտերմանան եւ կարենան միասնաբար մտածել, խաղալ, երեւակայել, հարցադրել, փորձարկել, ստեղծել: Այս գիծով արդէն իսկ բոլոր մասնակիցները, մեծ ու պզտիկ, ուղեկիցներուն հետ միասին կանոնաւոր եւ կազմակերպուած ձեւով առցանց հանդիպումներ («մտերմուկ»-ներ) սկսած են ունենալ, որպէսզի իրարու ծանօթանան Զարցանցին սկսելէն առաջ:

«ՆՅ» - Քանի՞ հոգի կը մասնակցի «Զարցանց»-ին:

Ա.Կ. - Ուղեկիցները 25 հոգի են եւ պաշտօնապէս մասնակցող աշխատակիցներու կորիզը 30-է աւելի է: 18-էն վեր երիտասարդներու թիւը 23 է՝ Պէյրութէն, Պոլիսէն, Գանատայէն, Միացեալ Նահանգներէն, Արժանթինէն, Ֆրանսայէն...: Իսկ պզտիկներուն խումբը 40-ի շուրջ է, որուն կէսէն աւելին նորեր են:

«ՆՅ» - Ծնողներն ալ ձեւով մը մասնակից են այս առցանց ճամբարին: Անոնք պէտք է տան մէջ յարմարութիւններ ստեղծել իրենց զաւակներուն համար...:

Ա.Կ. - Այո՛, ճիշդ այդպէս է: Ծնողք, պատանի եւ երիտասարդ բոլորն ալ խանդավառ են եւ չեն ուզեր որ իրենց միջեւ ստեղծուած շղթան փրթի...: Պէտք է ըսել, թէ Զարցանցի կազմը կարողացաւ շատ կարճ ժամանակի մէջ վերստեղծել եւ վերակազմակերպել ճամբարի եղանակը: Զարմանազանին մասնակցող ուղեկիցներու եւ երիտասարդներու հետ տեսերիզ մը պատրաստուեցաւ (<https://zarmanazan.org>) ուր կը բացատրուի «Զարցանց»-ին նպատակը: Այնուհետեւ՝ ինչպէս մասնակիցները, այնպէս ալ ծնողները օրը-օրին տեղեակ կը պահուին ծրագրի ընթացքի մասին:

«ՆՅ» - Մէկ խօսքով կարելի է ըսել, թէ «Զարցանց»-ը նորութիւններով եւ անակցկալներով լեցուն փորձառութիւն մը պիտի ըլլայ...:

Ա.Կ. - Այո՛: Բայց որպէսզի «Զարցանց»-ը յաջողի՝ պէտք է ո՛չ միայն մտերմութիւն ստեղծել, այլեւ համացանցային ժամանակը լաւապէս օգտագործել: Նուազագոյնի իջեցնել զայն, որպէսզի մասնակցողները իրենց կեանքը համակարգիչներու առջեւ չանցնեն: Նաեւ խմբային պայմաններէ ներս պէտք է անհատական ստեղծագործութիւնը կարելի դարձնել, ատոր համար պէտք է նաեւ խմբային յիշողութիւն մը գոյացնել: Իսկ այս բոլորը բնականաբար միշտ հայերէն լեզուի ընդմէջէն:

«ՆՅ» - Խորքին մէջ «Զարցանց»-ը մարտահրաւեր մը պիտի ըլլայ ամառնային ճամբար կազմակերպող բոլոր այն տեղական ու հայ կազմակերպութիւններուն համար, որոնք կ'ուզեն այս փորձառութիւնը ապրիլ: Անոնք ձեր գծած նոյն ճանապարհէն պիտի անցնին: Այս առումով հետաքրքրական պիտի ըլլայ տարբեր կազմակերպութիւններու կողմէ զանազան լուծումներու ուսումնասիրութիւնը...:

Ա.Կ. - Անշուշտ կարելի է ձեր ըսածը: Ի դէպ, կ'ուզէի երկու բառով անդրադառնալ նաեւ մեր կողմէ ծրագրուած, բայց ժահրին պատճառով յետաձգուած կամ ջնջուած նախաձեռնութիւններուն: Անոնցմէ էր՝ Զարմանազանի Ինալքոյին հետ միասին կազմակերպած Սփիւռքի հայերէնի ուսուցիչներու դասաւանդման ծրագիրը, որուն մասին ակնարկեցիք դուք մեր խօսակցութեան սկիզբը: Ան հիմնուած ըլլալով միեւնոյն ժամանակ Զարմանազանի մասնակցողներուն հետ փոխներգործութեան վրայ, կարելի չէր իրագործել: Յիշենք նաեւ որ Զարմանազան 2019-ի մասնակցող երիտասարդներուն համար նախատեսուած երկու աշխատանքներ եւս (մէկը՝ խմբովին թատերական տեսերիզներ պատրաստելու, միւսը՝ Ինալքոյի հետ միասնաբար խմբովին գրական աշխատանք տանելու համար յղացուած), որոնք Փարիզի մէջ տեղի պիտի ունենային Մարտ 19-էն Ապրիլ 1, ջնջուեցան: Սակայն այս երկուքը առցանց աշխատանքներու վերածուեցան եւ մինչ օրս՝ մեծ խանդավառութեամբ կը գործեն: Արդիւնքները պիտի տեսնէք ի մօտոյ: Այդ մասին ալ յոյսով եմ՝ կը գրուցենք ուրիշ առիթով: Խորքին մէջ՝ «Զարցանց»ը արդէն իսկ ընթացքի մէջ է շնորհիւ այդ ծրագրերուն:

Հարցազրույցները վարեց՝ ԺԻՐԱՅԻ ՉՈՒԱՔԵԱՆ